

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

1887



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 12

«Աղբիւրի» զբաղանական ուղիւմ ԿՈՅՐ ԱՐՄԻՒ	
Կոյր Արծիւ (բանաստեղծութիւն) . . . . .	Արեաք
Վահան Մամիկոնեան (Հայոց Պատմութիւնից)	
շար. և լիբր. . . . .	Ա. Բարախանեան:
Իմ շնիկը (սրտակեր)	
Իմ շնիկը (ոտանաւոր) . . . . .	Յ. Ղազարեանց:
Բարի մարդու վրէժխնդրութիւնը . . . . .	Օր. Սաթիւիկ Դիւեանց
Բազէն ու աղանիւն (Ժողովրդական) . . . . .	Նժդէհ
Կովկասեան տիպեր (սրտակեր)	
Դան-գան (Ժողովրդական խաղ) . . . . .	Ա. Մատուրեան
Ռոբինզոն (Եւրոպ. շար. և լիբր.) . . . . .	Փ. Վարդանեան:
Երգ (բանաստեղծութիւն) . . . . .	Յ. Յովհաննիսեան

## ԳԻՏՈՒԹԻՒՆ

Ընտանեկան զրոյցներ: Ա. Էք և տեսողական պատարանքներ Բ. . . . . Ն. Տէր-Աւետիքեան

## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օրոյցոյցներ: Համաշխարհային ցուցահանդէս: Կեանքի գեահատում Պարսկաստանում.

## ԱՅԼԵՒԱՅԼՔ

Հռովմի Պապի յօբելեանը:

## ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Հանելուկներ: Առաջարկութիւն: Միների խաղը: Լուծումն Ա. Տ. Խ. Հանելուկի: Բերուտ: Նախընթաց №-ի Հանելուկի և թուարանական ֆոկլորի բացատրութիւնները:

## ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

Տարուայ լիբրըն:

Շրջաբերական:

Պարոն Գ. Ե -ին . . . . . Ղ. Աղայեանց

Խ ա ո ճ ւ ու ռ եր. Շրջաբերական ա. Սինոդի: Մեր նշանակչութիւնները, «Աղբիւրի» նուիրողներ: Ընծաներ նոր տարու: Խմբագր. գրասենտար: Հասցէների մասին: Կամոյիկոսի կոնդակ: Ստացած զրբեր: Մի հետադիր:

Ձեռն տպագրութիւն: Պատասխաններ: Յայտարարութիւններ:

## Ա Ր Ա Ք Ս

Պատկերադար. Հանդէսի բաժանորդագրին է 3 ռ. իւրաքանչիւր զիբը—2 ռ. 50 կ. ԱՐԱՔՍԻ բաժանորդագրութիւնը բացուած է միայն երկու զրբի համար: —Ամեն մի զիբը բաղկանում է 12 տիմաւ թիւթից: ԱՐԱՔՍԻ խմբագրութեան հասցէն. Ս. Петербургъ, Графскій переулокъ д. № 7, кв. № 22, Симеону Гулампрыанъ.

ԵԿՈՂ 1888 ԹԻՒՆ

# ՄՇԱԿ

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ԲԱԼԱԲԱԿԱՆ ԼՐԱԳԻՐԸ

Կը Հրատարակվի Թիֆլիսում, նոյն դերքով և նոյն պրոգրամայով:  
Մենք կրտսանանք սեփական հեռագրները:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է. վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է խմբագրատանը (բարձոնսկայա և Բազարնայա փողոցների տնիկենում, Թամամշեվի տանը):

Կայսրութեան ուրիշ քաղաքները «ՄՇԱԿ» գրվելու համար սկստք է գլխիկ հետևեալ հասցեով. Тифлисъ, Редакция газеты „МШАКЪ“, իսկ արտասահմանից. Tiflis Rédaction du journal arménien «MSCHAK».

Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿ» պրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջ-նորդող յոգուածներ, II. Ներքին տեսութիւն. Բնականոր յոգուածներ (Հասարակական, դատաստանական, անտեսական և այլն) Թղթակցութիւններ, լուրեր, III. Կառավարական կարողաբութիւններ, IV. Արտաքին տեսութիւն. Բնականոր յոգուածներ, Թղթակցութիւններ, լուրեր, V. Խառն լուրեր, VI. Հեռագրիչներ և Բօրոս, VII. Բանասիրական. Յիշեալներ, Ճանադար-Յորդութիւններ, ազգաբնական, ուսումնական յոգուածներ, վէպեր և այլն. VIII. Յայտարարութիւններ:

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուներով. վճարը՝ բառին 2 կոպէկ:  
Տասն անգամից աւելի տպվող յայտարարութեան համար նշանաւոր գիշում կրկնի:

Խմբագիր-Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

1888-ին  
(ԵՐԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

# ԱՐԶԱՐԱՆԵՐ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹԸ

ԿՐԶԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԻԵՒՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ՆԻ ՀՆՏԵՒ ԱՂ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ.

I. Տեղեկութիւններ կառավարութեան գործադրութիւններ և օրէնսդրական միջոցների մասին:— II. Առաջնորդող յոգուածներ Հասարակական կեանքի նշանաւոր հարցերի վերաբերութեամբ:— III. Թղթակցութիւնների Հայաբնակ տեղերից. Ընդ-Հանուր տեսութիւն Հայ և օտար լրագրիչների տեղեկութիւնների և կարծիքների:— IV. Տնտեսական և առևտրական հարցերի բնագոտութիւն:— V. Յոգուածներ ժողովրդական կրթութեան վերաբերութեամբ:— VI. Արտաքին տեսութիւն. յոգուածներ և տեղեկութիւններ արտասահմանեան Հասարակական և քաղաքական կեանքի նշանաւոր անցքերի մասին:— VII. Կրեպիկա և մասենախօսութիւն:— VIII. Յիշեալներ:— IX. Չանաղան լուրեր:— X. Յայտարարութիւններ:

«ԱՐԶԱՐԱՆԵՐ» 1888 թ. ԿԱԶՄԱՏԱԿՅԵՆ ԲՈՂՈՐ ՆԵՐԱՅՆ ԱԶՄԱՏԱԿԻՑՆԵՐԸ.

Տարեկան բաժանորդագրինն է 5 ռ. Կէս տարուանը 3 ռ.

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և

«Կենտրոնական գրավաճառանոցում»:

Օտարաքաղաքացիք գլխիկ են՝ Тифлисъ, въ Редакцію „АРЦА-ГАНКЪ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal „ARDZANGANG“.

ԱՂԱՐԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԻ ԲՆԴՈՒՆՎՈՐԱՐ:

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



ԲԱՅՈՒՆԻ Է ԱՌԱՋԻԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆԸ



ՄԻԱՄԱՆԱՅ ԳՆՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԳԻՄ

(ԵՐԵՒԱՆԵՐԻ ՆԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Վ. Յ. Ն. Ր. Դ. Տ. Ա. Ր. Ի.

Տարեւոր լոյս է տեսնում 12 համար, 3 - 4 տպագրական թերթից իւրաքանչիւր համարը:

Առաջին կայ 1888 թ. դեկտեմբերին կայ իսկա ընդարձակել «ԱՂ.ԲԻԻԻ» բ. բաժինը, իսկ ա. բաժինը պիտի աշխատենք, պահպանելով ամսագրի բուն նպատակն ու ուղղութիւնը, դարձնել մի պատկերազարդ Հանդէս փոխարինող շքեղ հրատարակութիւն:

«ԱՂ.ԲԻԻԻ» 1888 թ. I. պրէմիան՝ ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴՐԸ ՆԻ ՄՈԳԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ ԷՖԷԼԿԱՆԻ օլէօգրաֆիա, արդէն թէ Թիֆլիզում և թէ գաւառներում մի-մի օրինակ կան ՚ի ցոյց բաժանորդներին: Այս պատկերը կարող է ամենաշքեղ հիւրասենեակները՝ զարդարող պատկերներէց մէկը լինել: 1888 «ԱՂ.ԲԻԻԻ» բաժանորդ գրուողը Հէնց իսկոյն կրտսանայ այդ պրէմիան բաժանորդ գրուելուն պէս:

II. Պրէմիան՝ մի ԳԵՂԵՅԻԿ ԳԻՐԲ: Սա կուղարկուի բաժանորդներին Զատիկուայ Ա-ի հետ:

«ԱՂ.ԲԻԻԻ» 1888 թ. III. պրէմիան՝ մեր տաղանդաւոր նկարիչ Գ. Բաշինջաղեանի յայտնի «ԱՂ.ԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» վիճակ կըզցուի «ԱՂ.ԲԻԻԻ» բաժանորդներին մէջ սեպտեմբեր ամսին, ներկայութեամբ Թիֆլիզում գտնուող բաժանորդներին և հետաքրքրուողներին: «ԱՂ.ԹԱՄԱՐԱՅ ԾՈՎԱԿԸ» ամենող բաժանորդը, եթէ կամենայ կարող է այն թողնել խմբագրութեանս և ստանալ 100 ռուբլի:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

#### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքերութներ, Խանապարհօրդութիւններ, կենսագրութիւններ: II) Բանաստեղծութիւններ: III) Գիտութիւն և արուեստ: IV) Հետաքրքիր տեղեկութիւններ: V) Այլ և այլք:

#### Զ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

VI) Մանկական, ֆրեօրէլեան, շախմատի և այլ խաղեր, Բերուսներ, Թուարանական խնդիրներ, Անեկդոտներ, Հանելուկներ, շուտասուլուկներ: VII) Երգեր՝ ձայնագրած (նոտաներով):

#### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դատարարական վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ: IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ: X) Մատենախօսութիւն և նոր գրքեր: XI) Խառն լուրեր: XII) Պատասխաններ. Յայտարարութիւններ:

«ԱՂ.ԲԻԻԻ» տարեկան բաժանորդագիրն 3 ռ. է, պրէմիաների ծրարի համար պէտք է ուղարկել 3 հատ 7 կ. մարկաներ:

ԱՊԱՌԻԿ ՈՉՈՒՅ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ:

Հասցէն՝ Тифлисъ, Редакция «Агбуры», իսկ արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction du journal «AGBUR».

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅ

# ԱՂԲԻՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՐԱՆԵՐԸ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

---

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

---

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

---

ԹԻՖԼԻՉ

ՅՈՂՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

ՈՐԲԵԼԵՆ ՓՈՂՈՑ, № 1/2

1887

Дозволено цензурою. Тифлисъ, 9 Декабря 1887 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 1 и 2





ՀԱՆՐԱՊԷՏ ԲԱՐՈՆԵՆԲԱՐՆԵՆԻՆԻ

ԿԱՅՐ ԱՐԾԻԻ





## ԿՈՅՐ ԱՐՄԻԻ

Երպի ծայրին մի ծեր ար-  
ծիւ,

Արձանացած մեն-մենակ,  
Տխուր, Լքեալ, աղու սրտիւ  
Նա ողբում է իր վեճակ:

Սուր, ահարկու ականողիք  
Թմրած, անշարժ և անլոյս,  
Ի՛նչ է իշխում իր բոլորտիք,  
Արցրած է նա իր այդ ոյժ:

Թուեր թուլցած, չեն սաւառնում  
Բարձր օդային աշխարհում,  
Ահաբեկուած թռչուն, էրէ  
Չեն սարսափում, քար կտրում:

Պար բոլորած ճուղղելով  
Լոր և արտոյտ սանձարձակ՝  
Նրա շուրջը թռչկոտալով,  
Անում են ծաղր ու ծանակ:



Իսկ խեղճ արծիւ խորասուզուած  
Յիշում է իր յաղթ օրեր,  
Եւ անմըռունչ, յուսահատուած,  
Թափում է պաղ արցունքներ:

Պու, Տէր արծիւ, խոնարհ նայէ,  
Այդ սեպացած ժայռի տակ,  
Ուր մի ծերուկ լուռ նստած է,  
Եւ ողբում է մեն-մենակ:

Նա էլ վարած է կռիւներ,  
Պործել է շատ յաղթութիւն,  
Բայց կեանքի միտք, անցած բաներ  
Այժմ էլ չունին զօրութիւն:

Իմ մանուկներ, որ բղձում էք  
Տաղանա, շնորհք ստանալ,  
Պիտէք որ դուք պարտաւոր էք  
Ծերութեան օրն հաշիւ տալ . . .

Այժմ այն ծերուկ և այն արծիւ  
Մենակ նստած քարափին՝  
Պատրաստում են իրանց հաշիւ,  
Որ կեանքի հետ տան վերջին . . .

ՍԻՐԱԲ

# ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

(Հայոց Պատմութիւնից)

## ԵՐԿՈՒ ՉԱՐԱՊՐԹՆԵՐԻ ՄԱՀԸ



թ.

Իհրանեան Զապուհը վերջապէս իմացաւ Վահանի տեղը և դարձանամուտ լինելով Արշարունեայ երկրի մի զետաձորում, սպասում էր հայոց սպարապետին:

Վահանը իր խմբի հետ տեղափոխուեց Նրիդայ գիւղի մօտերքը: Այդտեղ մի երեկոյ գտաւ նրանց Հրահատ Վամսարականը, սր վաղուց հեռացել էր բանակից Գուլին գնալու և իր մի քանի զորքերը կարգադրելու մտքով: Ներսէհն շտապեց զրկել իր եղբօրը և հարցնել նրա առողջութիւնը:

— Զրգիտես թէ ինչ լուր եմ բերել, Ներսէհ, խօսեց Հրահատը ծիծաղելով. — մի ձեքում երկու որս ենք բռնել:

— Ի՞նչ որս, ո՞վ է, ի՞նչպէս:

— Լսիր: Ամբողջ Ժամանակ ես գտնվում էի Բասենում, Բողբերդի մօտ. երկար աշխատում էի այդ բերդը մտնել, բայց չըկարողացայ: Ատամի օգնութեամբ կարողացայ շինականներից մի փոքրիկ խումբ կազմել, այլ և կաշառել բերդի պահապաններից չորսին: Մինչդեռ պատրաստվում էի զիշերով գրաւել բերդը, յանկարծ լիութ-



նաչափ ձիաւորներ թափուեցան մեզ վրայ: Նրանք գալիս էին սրարշաւ և, ինչպէս առաջին նուազ կարծեցինք, օգնութեան էին հասնում մեզ վանելու համար: Իմ հետեակները լաւ ջարդ տուին այդ ձիաւորներին և այնքան կարճ միջոցում, որ ես մնացի զարմացած: Յարձակուող խումբը զարհուրած դէս ու դէն ցրուեցաւ, մի քանիսներն էլ բերդը մտան: Զուտով ամեն ինչ պարզուեց: Բերդապահ Վշնասպը փախաւ, և մենք ներս մտնելով իմացանք, որ քաղաք մտած ձիաւորները պատմել էին, թէ այդ օրը Կարնոյ սահմաններում Վահանի զօրքը հալածել է իրանց. իսկ մեր խումբը ընդունել էին մեր բանակի մի մասի տեղ, որ զալիս էր բերդը պաշարելու: Վշնասպն իսկույն փախել էր՝ Ղապուհից օգնութիւն խնդրելու: Բերդին տիրացայ ես և իհարկէ իսկույն աղատեցի Սահականուշին և Զարուհուն: Միւս օրը հեռացայ Բասենից և լսեցի որ ձիաւորներին ջարդողը դու ես եղել:

Ուրախութեան աղաղակ բարձրացաւ խողների մէջ. Ներսէհն արտասուելով համբուրեց եղբօրը և ամենքի մօտ ուխտեց մի քանի ոչխար գտնել:

— Դու սրտեղ թողեցիր նրանց, հարցրեց նա Հրահատից:

— Ատմի հետ նրանց տարայ Աղիովիտ, Զարիշատի տէր Տաճատ իշխանի մօտ թողեցի. իշխանի կինը, Զարուհու մօրաքոյրը, անչափ ուրախացաւ և ասաց որ նրանց երկար ժամանակ հիւր պիտի պահէ:

— Զարիշատ... որքան հեռու ես դնացել, սիրելիս:

— Այո, ես զիշեր ցերեկ ճանապարհ էի կտրում, հարցնում էի ամեն տեղ, մինչև որ գտայ սպարապետի բանակատեղը:

Ներսէհր վազեց սպարապետի մօտ, որ մենակ նրա տած խօսում էր մի գիւղացու հետ: Նա էլ չափազանց ուրախացաւ. Հրահատի քաջութեան վրայ և մի և նոյն ժա-

մանակ պատմեց նրան իր ծրագիրը, որ կազմել էր գիւղացու հետ: Ներսէհ շատ հաւանեց այդ ծրագիրը և շատ ուշ թողեց Վահանին մենակ: Սպարապետը դեռ երկար չըքնեց և անգադար միտք էր անում:

Առաւօտեան երիզացիք զինուորուած վահաններով և նիզակներով շար ընկան պարսից բանակի առաջ պատերազմական կարգով: Սպարապետն էր այդպէս կարգադրել, ինքն էլ իր մարդկանց հետ անցաւ պարսից բանակի քամակը և յանկարծաճաս կայծակի պէս նետուելով թշնամիներէ վրայ, սաստիկ ջարդ տուեց և փախցրեց բանակի մի մասը: Մի անգամ էլ յաղթուեցան պարսիկները:

Հապուհը մոնչում էր վայենի գաղանի պէս. նա կրկին կուտեց իր բանակը և գնաց Վահանի ետեւից դէպի Ղտեայ գիւղը, մտքումը դրած՝ կամ չարաչար մահով մեռնել, կամ ոչնչացնել այդ փոքրաթիւ բանակը:

Հայոց սպարապետը նեղ տեղն էր ընկել. անհնարին էր առաջ գնալ, իսկ ետեւից պարսիկներն էին գալիս: Արի տղամարդը իր շուրջը հաւաքեց քաջ նիզակակիցներին, բոլորի հետ եղբայրաբար գրկախառնուեց, յորդորեց չրվախենալ թշնամու բազմութիւնից:

— Իմ սիրտն զգում է, որ սա վերջին պատերազմը պիտի լինի. կամ մահով կը վերջացնենք, կամ կենդանի կը մնանք և կը ծաղրենք մեր թշնամիներէ կորուստը:

Ասաց սպարապետը և դասաւորեց իր հարիւրաչափ մարդկանցը, ինքը կանգնեց առջևում: Պարսիկներէ խիտ ու ստուար խմբերը այնպիսի սաստկութեամբ յարձակուեցան, որ հայ բանակի մեծ մասը սարսափած փախաւ: Մնաց Վահանը երեսուն մարդկանցով այն ահագին բազմութեան առաջ. բաց չըվախեց, հաստատ ոտով կանգնեց ճակատ առ ճակատ: Այդպէս հաստատակամութիւն ունի միայն այն մարդը, որ մեռնելու և ապրելու մէջ ոչինչ առաւելութիւն, նոյն իսկ զանազանութիւն չի տեսնում: Թշնա-



մի բանակին դէմ առ դէմ Վահանին սիրտ ու քաջութիւն էր տալիս մեռնելու միտքը: Ջարդել ու ցրուել այդ բանակը անհնարին էր:

Ջապուհը տեսնելով Վահանին, կանգ առաւ և կանչելով ուրացող Գրիհոն Սիւնեցուն, ասաց մի գառն ժպտով. «Այդ մարդը կամ խենթ է և այսքան բաղմութիւնը ճանճերի տեղ է ընդունում, կամ մի աստուածային էակ է, որ պիտի կոտորէ մեզ»:

—Ոչ այդ, ոչ այն, տէր, պատասխանեց Գրիհոնը. թոյլ տուէք ինձ վերջացնել նրա հետ դործը:

Սիւնեաց գունդը առաջ եկաւ: Հսկայատիպ Գրիհոնը ուրախութեամբ ոլորում էր հառա ընչացքը: Բայց մինչև պատրաստուելու հրաման տալը, Վահան ոպարապետը երեք անգամ երեսին խաչ հանելով, վազեց թշնամու վրայ, նրան հետևեցին մնացած երեսուն մարդիկը...

Այ թեւում ունենալով հուժկու ներսէհին, իսկ ձախում առիւծասիրտ Հրահատին, Վահանը կոտորելով ճեղքեց թշնամու շարքերը, անցաւ. նրա ետևից հասան Քոնթ Առաւենեան, Ներս Յովսեփեան, Ատդէն Վանանգացին և Ղերպարզոս յոյնը, որոնք նոյնպէս սկսեցին կոտորել: Այդ հրաշալի քաջագործութիւնը դիւթեց պարսիկներին. ղենուորները սաի ի բերան մնացել էին շուրած, շատերը փախչելու ճանապարհ էին որոնում:

Գրիհոն Սիւնին կատաղած առիւծի պէս գոչելով ընկաւ այդ չորս մարդկանց ետևից: Նրա ահագին սուրը սաստիկ թափով իջաւ Ներսի գլխին, սաղաւարտը ճեղքուեց և նա երկու գառած գլխով գետին փռուեց: Հէնց այն միջոցին, երբ Գրիհոնը կրկին բարձրացրել էր սուրը, Քոնթ Առաւենեանը միեց նիզակը նրա կռնատակը. միւս ընկերները ծակեցին զրահը և յանկարծ երեք նիզակ ցրուած էին ուրացեալի մարմնի մէջ. նա մնաց ցցուած, մինչդեռ նիզակները խաւնում էին թոքերը: Վերջապէս

Գղիհոնը վայր ընկաւ, իսկ այդ քաջութիւն գործողները  
Հասան Վահանի մօտ:

Պատերազմը վերջացաւ: Տրտում ու յուսահատ նրա-  
տած էր Ղապուհը Գղիհոնի դիակի մօտ, նա բռնուել էր  
մի տեսակ գերբնական երկիւղով: Տեսնելով այդ Հսկայի  
մահը, այդ կոտորածը և Վահանի ազատուիլը, նա քիչ  
էր մնում լաց լինի, բայց ամաչում էր Գղիհոնի ծառա-  
ներից, որոնք Հանում էին իշխանի փորտիքը, սիրտն  
ու թոքերը, որ դիակը չըհոտի: Վերջացնելով, մարմի-  
նը պատեցին եղեգնով, Սիւնեաց աշխարհը տանելու հա-  
մար:

Օրը միջին: Դառն, անմխիթար օր պարսիկները հա-  
մար: Ղապուհը իր վրանում յուսահատ նստած է. Հազա-  
րաւոր մաքեր տանջում են նրան: «Ի՞նչ կըլինի, եթէ  
այդ մարդը այդպիսի յաղթութիւնից յետոյ մտնէ Անձը-  
տայ, Ծովաց և Հաշտենից դաւառները և այնտեղի հա-  
յերին մեզ դէմ ղինէ: Մի բուռն մարդիկ այսպիսի քա-  
ջութիւն արին. Հապա ի՞նչ կըլինի Հազարաւորների-  
նը»:

Ամբողջ գիշերը այս մաքերը տանջում էին պարսից  
մարգպանին: Լուսաբացին արեաց զունդերը հրաման րո-  
տացան Հապճեպով Բասեան գաւառը չուել:

Գնաց և Վահանը: Թողնելով Կամուրական եղբայր-  
ներին Զարիշատում, նա Արարատի երկիրը Հասաւ և իո-  
կոյն գնաց օ. Իջմիածին. այնտեղ ուխտ արաւ և սրով-  
հետև Իջման տաճարը արտաքուստ քայքայուել էր, պա-  
տուէր արաւ կարկատելու և ապա գնաց Դուին, ուր նրան  
սպասում էին կաթողիկոսը և ժողովուրդը:

Մի շաբթից յետոյ լուր Հասաւ Դուին, թէ Պերոզը  
չարաչար յաղթուել է Հոններից և սպանուել պատերազ-  
մում: Ու լսում էր, ասում էր «չարը պատժուեց»:

Հուսով սպասեցին և այն, որ Ղապուհը ձեռնառնայն



Ատրպատական է անցել և անտեղ թողնելով իր զօրքը, գնացել է մասնակցել այն ժողովին, որ թաղաւոր պիտի ընտրէր:

## Ե Ր Ե Ք Պ Ա Հ Ա Ն Ջ



Փ.

Մարտիկոտանը Պերոզկայ լիտոյ թաղաւոր ճանաչեց Վաղարշին, որ մի բարեհոգի և խաղաղասէր մարդ էր: Պարսից լայնա-  
ծաւալ տէրութեան ամեն ծալրերում մարդիկ ազատ շունչ քաշեցին:

Հանգստացաւ և Հայաստանը: Հայոց սպարապետը սու-  
րը դրեց պատետնում, նա և նրա հաւատարիմ զինակից-  
ները քաշուեցան իրանց տները, մտան ընտանիքի ծոցը:

Բայց Վահանը չէր վարձատրուած: Նա ոպասում էր, որ վերջապէս իր արդար դատը լսեն: Եւ իսկ որ լսեցին: Նրա անհաշտ թշնամիները, Զարմէհր Հազարաւուխտ և Զապուհ Միհրանեան սպարապետները բարեկամ դարձան և պարսից զիւանի մէջ յանդիման լինելով արեաց արքա-  
լին, պատմեցին մեծ Վարդանի արժանի ժառանգի առա-  
քինութիւնները, անպարտելի քաջութիւնը: Խորագէտ Վա-  
ղարշը հասկացաւ իսկոյն, որ այդ առիւծի հետ բարեկա-  
մութեամբ միայն կարելի է բան տեսնել:

Գարնանամուտ էր. մի այնպիսի ժամանակ, երբ բը-  
նութեան փոփոխութեան հետ հայերը սպասում էին Պարս-  
կաստանից մի որ և է նորութիւն:

Հեր դաւառի Նուարսակ գիւղը մի հետաքրքիր տե-  
սարան էր ներկայացնում: Այնտեղ հաւաքուել էր պարս-  
կական մեծագումար զօրքը, որի առաջնորդ Նիխոր մարդ-

պանը իր բնակարանում՝ զբաղուած էր մի քանի հիւրեր պատուելով: Պարսից զօրքը պատերազմի չէր եկել. Նիխորը քաղաքներ և բերդեր առնելու մասին չէր մտածում: Նրա մօտ գտնվում էր Վաղարշի խաղաղութեան հրովարտակը, որով հրաւիրում էր Վահանին հնազանդուիլ իրան: «Էլ ի՞նչ ունիս ասելու, գրուած էր այդ հրովարտակի մէջ. — դու ատում էիր Պերոդին, որովհետեւ նա չար էր և անբարիշտ: Այժմ նա չքիւայ: Այլ ևս ի՞նչ միտք ունիս»:

Այդ հարցի պատասխանին էր սպասում Նիխորը իր հիւրերից, որ հայոց սպարապետի կողմիցն էին եկել և հայ ազնուատուհմիկ հարապատներիցն էին: Օրը մթնելու վրայ էր, երբ նրանք հասան բանակը. ուռտի և Նիխորը ցանկացել էր նախ լաւ հիւրասիրել և ապա լսել նրանց խօսքը: Քիշերն անցաւ ուրախութիւնների մէջ: Իսկ երբ լուսացաւ, Նիխորը ատեան կազմեց և հայ սպառուիրակներին հարց ու փորձ արաւ: Խօսեց Սահակ Կամսարականը, Ներսէհի և Հրահատի եղբայրը: Նա ասաց.

— Արեաց արքային հաւատարմութեամբ ծառայել պարտք են համարել մեր նախնիքները շատ հնուց: Զեղ էլ յայտնի են, ու քաջ մարդական, մեր երևելի մարդկանց անունները, որոնք պարսից թշնամիների առաջ արիւն են թափել. իմ միտքը այդ քաջերին գովելը չէ և ես այդ տեսակ յանձնարարութիւն չունիմ մեր սպարապետից: Վահան Մամիկոնեանը, ուղարկելով ինձ ձեզ մօտ, պառուիրել է հասկացնել որ հայոց ազգը երբէք միտք չունի ապրտամբել տիրող տէրութեան դէմ. այլ ցանկանում է ծառայել, և հաւատարմութեամբ ծառայել այն զահին, որ Աստուծու տնօրինութեամբ մեզ վրայ հրամայող է կարգուած: Մեր քաջ սպարապետը մինչև այժմ պատերազմներ է մղել ձեր զօրքերի դէմ ոչ թէ յաղթողի սին փառքը վայելելու համար, կամ ոչ թէ հարստութեան և աշխարհականութեան անարդ ծարաւով, ոչ. այդ չէ եղել հա-



յոց երևեկի մարդկանց միտքը: Դուք լաւ գիտէք Պերողի արարքները. ահա դրանք էին հարկադրում սպարապետին մաքառել: Նրա նստատան էր, եթէ ապրել, լաւ ապրել, իսկ եթէ մեռնել, մեռնել՝ տպադաշ կեանքում գեղեցիկ ապրելու յուսով: Նա պատրաստ էր մինչև վերջին շունչը սուր ի ձեռին ունենալ. և այդ վճիռը չի թողելու, եթէ պարսից-արքունիքը շարունակէ այնպէս լինել, ինչպէս էր մինչև այժմ: Հաւատացէք իմ անկեղծութեանը, հօր մարդպան, ես ոչ վախկոտ մէկն եմ, ոչ էլ շողոքորթ. ինձանից մեծի ասածներն եմ ձեզ յայտնում:

— Եւ այժմ ինչ է Վահանի միտքը, հարցրեց Նիխորը:

— Այդ դուք կրտսնէք այն երեք խնդիրքներէից, որ սպարապետը առաջարկել է ձեր պատուիրակներին և ինձ էլ հրամայել է ձեզ յայտնել:— Ահա այդ պայմանները:

Կամսարականը հանեց մի մազադաթի կտոր և սկսեց կարդալ: Նրան ականջ էին դնում ուշադրութեամբ:

— Առաջին խնդիրքն այն է, որ թողէք մեզ և մեր քահանաներին քրիստոնէական օրէնքը ազատ, աներկիւղ և համարձակ պաշտել, ուր որ կամենանք: Հայից մոզ չը շինէք. հայի ուրացութիւնը չը վարձատրէք պատուով և զահով: Հայոց աշխարհի բոլոր կրակաբուռները քանդէք, վերցնէք: Երկրորդ խնդիրք, իմանաք լաւն ու վատը որոշել: Լաւ համարէք քաջ, բարետոհմիկ, օգտակար մարդկանց, և ոչ թէ վատ, անարդ և անպիտան մարդկանց, որոնց մինչև այժմ պարսից արքունիքը պաշտել փառաւորել է այն պատճառով, որ մսիրասաշտ են դառնել: Իսկ երրորդ խնդիրն այն է, որ արեաց թագաւոր անարդար դատատան չանէ. ամեն բան աչքով տեսնէ, կշռէ, ականջով լսէ և իմանայ մի մարդու լաւութիւնը կամ վատութիւնը: Գատաւատան չանէ միայն մի կողմի ասածները լսելով, ուղ երկու կողմն էլ քննէ, և ապա միայն լաւն ու վատը որոշէ և ըստ այնմ վարձատրէ կամ պատժէ:

Տիրեց կարճ լուսթիւն: Սահակ Վամարականը յետ  
զառաւ նստեց իր տեղը. նա այլևս ասելիք չունէր: Նի-  
խորը լուռ ու մունջ մտածում էր այդ պահանջների մա-  
տին: Վահանի համարձակ առաջարկութիւնները, ինչպէս  
սրբով տեսնվում էր, խոր տպաւորութիւն էին գործել նը-  
րա վրայ: Վերջապէս նա խօսեց.

—Ճիշտ է, միանգամայն ճիշտ: Վահանը որքան լու-  
սատեղանում է, այնքան էլ զեղեցիկ մտածող է: Իրա-  
ւունք ունի սահանջելու. և մեր արքան, ես վստահ եմ,  
պիտի յարգէ քաջ տղամարդու առաջարկութիւնը:

Խորխուռնեաց ազդից մի նախարար, որ պարսկաց Բա-  
նակունդն էր լինում և այդ խօսակցութեան ժամանակ տը-  
խուր էր ինչպէս մի խաւարմած գիշեր, կանգնեց և ա-  
ռաջ գնալով, սկսեց խօսել.

—Տէր, արեաց արքայի հաւատարիմ և երկրպագ  
ծառաներս վրդովուած ենք, լսելով Մամիկոնեան Վահա-  
նի խօսքերը: Այդ բոլոր առաջարկութիւնները մեզ անպա-  
տուելու համար են միայն: Սակայն ո՞վ է այդ Վահանը:  
Մի ըմբոստ գաւաճան, որ բիւրաւոր վշտեր է պատճա-  
ռել արքայական կառավարութեանը և մեր զնտերից շատ  
քաջազուններ է տապալել: Այդպիսի մարդուն շուտ են ա-  
նում դահճի ձեռքը մատնել, ոչ թէ հանդարտ լուծ են  
թէ ինչ է ասում: Անմահ արեգակի երկրպագուներս բո-  
ղոք ենք բարձրացնում այս անուր յանդիմութեան դէմ,  
տէր, մենք պատրաստ ենք միշտ ծառայել մեր թագա-  
ւորին, արիւն թափել նրա համար, ինչպէս մինչև այժմ  
էլ արել ենք: Եւ սակայն այսօր ինչնէր ենք լուծ մի ա-  
պրտամբից, որ համարձակում է առաջարկութիւններ ա-  
նել իր խաւարային մոլոր կրօնի մասին:

Ուրաջող Խորխուռնուն հետևեցին և միւսները, որ  
այնտեղ նստած էին և խնդրեցին պատժել Վահանին:  
Բայց Նիխորը իր սովորական հանդարտ ձայնով վրայ բերաւ.



— Իդուր էք վրդովվում, Չապուհ իշխան, ձեր մասին ոչինչ չունի Հայոց ուղարկւթոր: Դուք ճանաչում էք միայն մեր մեծագոր արքային: Մաղդեղական պաշտօնեան ինչու պիտի վերաւորուի մի Հայի խօսքերով: Դուք նրանցը չէք (Նիխորը ձեռքով ցոյց տուեց Սահակին), դուք մերն էք. և արեաց ազգը դեռ այն աստիճանին չի հասել, որ չըկարողանայ վարձատրել իր սրտացաւ զաւակներին:

Ատեանը դրանով վերջացաւ: Նիխորը դուրս գնաց, յայտնելով Կամսարականին իր գոհունակութիւնը և մեծ ցանկութիւնը տեսնել Վահանին: Կամսարականը ուրախ էր և երբ պատահեցաւ խորխուռունուն, ասաց Հայերէն.

— Դեռ ոչինչ չըկայ և դուք ճաքվում էք, ի՞նչ կըլինի ձեր օրը, եթէ Վահանը աւելի ևս փառաւորուի:

Ոչինչ չըպատասխանեց ուրացեալը, կարծես չըհասկացաւ. գլխակոր գնաց Նիխորի ետեւից:

Անցան ամիսներ: Հայաստանի բարեկամները ուրախութեամբ խմացան, որ Վաղարշը ընդունել է ուղարկւթոր ինդիքները և իր կողմից էլ հաստատել է նրա սպարապետութիւնը: Ամեն տեղ պատմում էին, թէ ինչպէս լաւ խօսել էր Վահանը Վաղարշի դիւանում, երբ նրա հրաւիրանօք Պարսկաստան էր գնացել: Պատմում էին նոյնպէս, որ Վահանը օղնական զօրք է տուել պարսիկներին՝ Զարեհի գէմ կռուելու համար, որ կամենում էր զաւր լալել Վաղարշից: Իսկ Հայոց երիտասարդները որպիսի՜ ըզմայլմամբ պատմում էին Վրէն Վանանդեցու քաջադուրծութիւնները, որոնց ականատես էր եղել Զարեհին հալածող պարսկական ամբողջ բանակը:

Ամեն տեղ տիրեց խաղաղութիւն:



որս տարի էր անցել այն ժամանակից, երբ Վահանը նախարարների խնդրքով Հայոց միաբանութեան գլուխն էր կանգնել: Այդ չորս տարիներն ընթացքում նրա անընկճելի ուժեղ կամքը կարողացել էր շատերի գեղեցիկ նպատակը իրագործել:

Մայիսուայ մի գեղաժպիտ օր էր: Դուինի ժողովուրդը խումբ-խումբ դիմում էր դէպի քաղաքի հարաւային գուները, ուր արդէն գումարուել էր եկեղեցական դասը: Մարդիկ ծիծաղելով խօսում էին, ուրախ էին ինչպէս Քրիստոսի յարութեան օրը և միմեանց պատահելիս ողջոյնի փոխարէն ասում էին. «Ժամանակն է, դալիս է, դալիս է»: Այդ խօսքերը վառում էին լսողներին. ամենքը շտապում էին շուտ գնալ տեսնել այդ եկողին: Մի ժամի ընթացքում քաղաքացիների մօտ կատուեցաւ մի ահագին բազմութիւն, որ ծփում էր ծովի պէս:

Ամբոխի աղաղակները յանկարծ դադարեցան և խիտ առ խիտ սեղմուած խմբերը յետ քաշուելով մի նեղ ճանապարհ, բաց արին: Դռների ետեւից դուրս եկաւ ձի հեծած ալեգարդ հոգևորականը, որին շրջապատել էին շատ ձիաւորներ և եպիսկոպոսներ: Մարդիկ յարգանքով բաց արին գլուխները, հոգևորականը օրհնեց աջ ու ձախ: Դա Յովհան կաթողիկոսն էր, որ հասնելով եկեղեցական դասին, իջաւ ձիուց, սկսեց զգեստաւորուիլ:

Ամբոխի համբերութիւնը հետզհետէ հատնում էր, իսկ սպասած մարդը չէր երևում: Առաջ գնացած ձիաւորները յետ էին դառնում միմեանց ետեւից և դանաղան լուրեր էին հաղորդում հետաքրքիր ամբոխին: Մէկն ա-



սում էր, թէ ինքս տեսայ, միւսը հաւատացնում էր թէ զեռ հեռու են, բայց շուտով կըգտան, որովհետեւ շատ են շտապում:

Վերջապէս հեռուից, Արտաշատի ճանապարհի վրայ երևաց ձիաւորների մի խումբ, որ սաստիկ արագութեամբ էր գալիս: Մի սարսափելի խառնակութիւն ընկաւ բազմութեան մէջ. իւրաքանչիւրը ուզում էր մի լաւ տեղ գտնել, ամենքից բարձր լինել: Եկեղեցական դասը սկսեց հանդիսաւոր երգեցողութիւնը. խաչաւորները բարձրացան՝ օգի մէջ:

Ամենից առաջ կանգնած էր հայրապետը և ոսկեկուռ խաչը ձեռին մի երջանիկ դէմքով նայում էր դէպի ձիաւորների խումբը: Մօտենալով քաղաքին, առջևից եկող մի ղեղեցիկ տղամարդ քշեց իր ձին և մի ակնթարթում հասաւ հայրապետի մօտ: Ժողովուրդը, մոռանալով տեղ գտնելու և բարձր լինելու ցանկութիւնը, սկսեց գոռալ, «կեցցէ՛ մարդպանը, կեցցէ՛...»: Իսկ կաթողիկոսը զրկեց հուժկու ղինուորին և երեխայի պէս սկսեց լաց լինել: Արտասուեց և ղինուորը, արտասուեցին նաև նրա հետ եկողները: Բազմութիւնը մտաւ քաղաք, սկսեց յառաջ ընթանալ աւելի և աւելի սեղմուելով նեղ փողոցում: Գլուխների այդ մեծ բազմութեան մէջ ձիու վրա երևում էր օրուայ հերոսը, որի շքեղ զարդարուն ղգեստը փայլում էր արեգակի տակ:

Վահանն էր դա, որին նոր էր Վաղարշը հայաստանի մարզպան կարգել: Նրա հետ եկողներն էին նրա դառնութեան օրերի անբաժան ընկերները, կամսարական եղբայրները և ուրիշ հարազատները:

Ժողովուրդը շատ ղժղոհ էր շարժւում. ամեն մէկի ցանկութիւնն էր երկար, շատ երկար նայել քաջին, տեսնել, ուրախանալ: Աղաղակները, որոնք ժողովրդի գոհունակութիւնն էին փայլում, ղղրդացնում էին քաղաքը:

Այդպիսի յուսահատ դանդաղկոտութեամբ թափօրը

Հասաւ Գուինի մայր-եկեղեցուն: Ով ճարպիկ էր կարող եղաւ ներս մտնել. իսկ մի ահագին բաղմութիւն մնաց զրսում:

Ամենայն Հայոց ալեգարդ Հայրապետը բեմ ելաւ: Տիրեց մի խորին լուռութիւն: Նա սկսեց խօսել: Ինչքան լաւ էր խօսում, ինչքան զմայլեցուցիչ էր ծերունին իր ուրախութիւնից փայլող վեհ դէմքով, իր պարթեւ Հասակով: Նա օրհնեց Վահանին, որ կանգնած էր նրա մօտ, Հայցելով Աստուծուն տալ նրա սրին յաղթութիւն եկեղեցու և ազգի թշնամիների վրայ:

Ապա դառնալով դէպի ժողովուրդը, սկսեց մի հիանալի ազդու քարոզ: Իւրաքանչիւր խօսքը ծերունու սրբտիցն էր դուրս գալիս և թափանցում էր լսողի սիրտը, որ դողում էր, յափշտակւում: Երբ Հայրապետը Հասաւ ողբերգութեան ծայրին, քարացած ամբոխը սկսեց հեկեկալ, լաց լինել: Իսկ այդ ամենի պատճառը, Հայ մարդպանը, կանգնած էր քարոզչի մօտ, գլուխը կորացրած, գեղեցիկ իբրեւ մի նորապսակ փեսայ:

Քարոզը վերջացաւ: Ամբոխը գրոհ տուաւ դէպի դուրս:

— Այսօր Աստուածային հրաշք է երեւում, ասում էին բիւրաւոր բերաններ...

Օրը կիրակի էր. ժողովուրդը խումբ-խումբ ցրուեց զբօսնելու. շատերը հեռացան քաղաքից անտառների գեղեցկութիւնը վայելելու համար:

Հայոց Համեստ զարուհը զարդարել էր Հայոց դաշտերը բիւրաւոր ծաղկունքներով: Առատաշնորհ էր նա, անուշաբոյր:

Բայց Հայոց սրտերի համար կար մի աւելի գեղեցիկ ծաղկափթիթ գարուն: Նա երեք ամսուայ կեանք չունեցաւ. նա կենդանարար, շքեղ էր և ձմեռնային բուքերի ժամանակ...

Դա Վահանն էր:

Ս. ԲԱԲԱՆՍԵԱՆ



միջով, իսկում է ալիքների կատաղութիւնից երեխային և նրան բերում իր հօր ոտքերի առաջ:

«Նս քեզ վերադարձնում եմ քո որդուն, ասում է ծերունին քաղցրութեամբ. նայիր նա ողջ և առողջ է. միայն մի քիչ սարսափած է»:

Թոմասը չըհամարձակուեց աչքերը բարձրացնել Սիմէոնի վրայ, և երկար լուռ ու ամօթով մնաց:

«Ներեցէք ինձ, մեծանձն ծերունի, բացազանչեց նա վերջապէս, սուտ արտասուք թափելով. ներեցէք իմ դէպի ձեզ արած կոպտութիւնը:

—Ի՞նչ ունիմ ես ձեզ ներելու, պատասխանեց Սիմէոնը. այս բոլէիս իսկ բաւականին վրէժխնդիր չեղա՞յքեզանից:

—Ի՞նչ, բացականչեց Թոմասը խորին յուզմունքով. ձեր վրէժխնդրութիւնը բարեբարութիւններով է կատարվում... Աստուած, այսպէս է վրէժխնդիր լինում բարի մարդը»:

Թարգ. ֆրանս. ՕՐ. ՍԱԹԻՆԻԿ ՇԵՆՍՆՅ



## ԲԱԶԷՆ ՈՒ ԱՂԱՌՆԻՆ

(Ժողովրդական)



Միշտիւն բազէն իր սուր ճանկերում  
 Գցած աղաւնուն պատառոտում էր.  
 «Հը՛, ճանկրո՛ւ ընկար. զո՛ւր ես աշխատում  
 Պրծնեյ իմ ձեռքից, զո՛ւր այդ հնարքներ:  
 Խաբեւո՛յ, ես ձեզ լսւ եմ ճանաչում.  
 Ա՛խ, հայհայիչներ, խորամանկ օձեր,  
 Ձեր ցեղը միշտ մեր արիւնն է խմում,  
 Դու էք մշտական մեր թշնամիներ:  
 Բայց կան աստուածներ վրէժխնդրութեան,  
 Նորա ամենքին կանեն դատաստան:  
 —Ա՛խ, ուր էր թէ այդպէս լինէր,  
 Այդ հէնց իմ սրտի ուզածն էր:  
 Հաղիւ հառաչեց աղաւնին մարած,  
 Սուր-սուր ճանկերում սաստիկ ճնշուած:  
 «Ինչպէ՛ս, ինչպէ՛ս, այդ ինչ ասացիր,  
 Ա՛խ, դու ուրացո՞ղ, մի մէկ էլ կրկնիր:  
 Դո՛ւ չես հաւատում հա՛ւ աստուածներին,  
 Նախախնամութեան այն հզօր ոյժին:  
 Ի՛հ, ուղում էի ազատել ես քեզ,  
 Բայց չէ՛, տեսնում եմ, որ դորան չարժես.  
 Բաս մեռ-իր. զո՛ւր է, զո՛ւր քո վրկուժիւն.  
 Աստուածներին չըկայ թողութիւն»:

ՆժԴԵՀ







ԿՈՎԿԱՍԵԱՆ ՏԻՊԵՐ



## ԴԱՆ ԴԱՆ

ճան, դան, իմ բալաս,  
Աստուած օր տայ՝ մեծանաս.  
Քեզ տեսնեմ ծլած, ծաղկած,  
Սուփրի զլիւումը նստած.

Նախշուն թաղուհին կողքիդ  
Ալ-կարմիր թաղը զլիւիդ.  
Ամենքն ասեն. «Թաղաւոր,  
Հարսանիքդ շնորհաւոր»:

\* \*

Դան, դան, իմ ծաղիկ,  
Հօրն ու մօրդ մէկ հատիկ,  
Քեզ տեսնեմ արտի միջում,  
Փալլուն մտնդաղը ձեռքում,  
Ոսկի արտը հնձելիս,  
Ճակտից քրտինք թափելիս.  
Ես էլ ասեմ՝ «Ո՛վ Աստուած,  
Մշակ որդուս տուր միշտ հաց»:

\* \*

Դան, Դան, իմ հողիս,  
Իմ մինուճար աղանիս.  
Քեզ տեսնեմ չալ ձի նստած,  
Սուր թուրը կողքիդ կապած,  
Գնաս թշնամու առաջ,  
Կռուես, լաղթես, որպէս քաջ:

\* \*



Դան, դան, իմ Աշոտ,  
 Աստուած սիրտ տալ քեզ գլխոտ,  
 Որ միշտ անտուն, անճարին  
 Տեղ տաս քո կտրի տակին.  
 Տան դուռդ միշտ բաց լինի,  
 Հաց չուտես առանց հիւրի.  
 Հիւրդ լինի խեղճ, անճար,  
 Որ սուփրէդ լինի արդար...

\* \*

Դան, դան, աննման,  
 Հերիքնաղդ քեզ զուրբան.  
 Ծլի՛ր, ծաղկի՛ր, անուշիկ,  
 Սիրի՛ր, պաշտի՛ր հայրենիք,  
 Եւ քո կեանքը, Աշոտ ջան,  
 Զոհ բեր նրա սուրբ անուան:

ԱՂԷՔ. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Մոսկովա.





Ռորինդօնը և Ուրբաթը էլի մի վեց օր նաւը զնացին, և ամեն օր երկու-երեք անգամ զընալ գալով, 16 անգամ գնացին, և ինչ որ կար աշնտեղ, բոլորն էլ վերցրին կղզին բերին:

Երբ որ 17 անգամ գնալու վրայ էին, սկսեց քամին փչել. կամենում էին շուտ-շուտ դէպի կղզին վերադառնալ, բայց չըկարացին. քամին շուտ տուաւ լատոր, վրան եղած բոլոր բաները ջուրը ձգեց. Ռորինդօնն էլ Ուրբաթի հետ ջուրն ընկան: Ուրբաթը շատ լաւ էր լող տալիս, իսկ Ռորինդօնը մի տախկակից բռնած էր լողում: Ալիքները նրա ձեռքից տախտակը փրցրին, և Ռորինդօնն սկսեց ընկղմիլ: Այդ միջոցին Ուրբաթը ջրի տակ սուզաւ, ձախ ձեռքով Ռորինդօնի գօտիկից բռնեց և հաղիւ հազ քաշեց տարաւ, ցամաք հանեց: Աշնտեղ Ռորինդօնը մեռելի պէս պառկած մնաց. Ուրբաթը վախից ինչ անելը չըգիտէր: Ռորինդօնը մի ժամի չափ ուշաթափ մնաց. յետոյ աչքերը բաց արաւ:

Ռորինդօնը փոքր ինչ զինի խմեց ուշքի գալու համար. յետոյ վրան քուն եկաւ և շատ լաւ քնեց: Միւս օրը գնաց նաւը տեսնելու. բայց նաւը չըկար. փաթորիկը խորտակել էր նրան և ջարդ ու փշուր էր արել:

Ռորինդօնը և Ուրբաթը այժմ մտածում էին, թէ ինչպէս դէպի տուն տանեն ափի վրայ դիզուած իրերը: Ռորինդօնն ասաց. «Այսպէս կանենք. առաւօտեան դու նրանց վրայ պահապան կրկանդնես. իսկ կէսօրին՝ ես. թէ չէ՝ փախչենք: Երբ որ դան, բոլոր ապրանքը կրկողպտեն»:

Նրանք լքցրին բոլոր վեց թնդանօթները, բերանները դէպի ծովը դարձրին, սլատրուին էլ մօտիկ դրին, որ



պէտք եղած ըռպէին կրակ տան: Յետոյ սկսան մինը մի-  
սի ետևից քարայր տանել այն ամենը, ինչ որ հանել էին  
նաւից: Զուհն էլ էր բան կրում. յետոյ Ռորինդօնը բերաւ  
լամաներին, որ նրանք էլ փոքր ինչ ծանր բաներ կրեն:

Ռորինդօնը մի փոքրիկ տուն շինեց տախտակներից.  
պատուհաններն էլ ապակույ շինեց. որովհետև նաւից բե-  
րուած բաների մէջ ապակի էլ կար: Յետոյ ասաց Ուրբա-  
թին. «Ե՛կ, մեր ցանկի մէջ փայտէ տուներ շինենք և  
փոսի վրայ մի կամուրջ. կամուրջն օղակներով շինենք, որ  
կարելի լինի բարձրացնել նրան և իջեցնել: Կամուրջը շի-  
նեցին, դռների առջև էլ երկու հատ թնդանօթ կանգ-  
նեցրին:

Յետոյ սկսեցին կզզու վրայ առատ բռնող բրինձը հըն-  
ձել. Ռորինդօնը մանգաղի տեղ՝ մի հին սուրով էր հըն-  
ձում. երբ գետնախնձորն էլ քաղեցին, սկսեցին ցորենը կա-  
սել և ալիւր աղալ նաւից բերուած փոքրիկ աղօրիքով:

Քրնձից և ցորենից պաքսիմատներ թխեցին. ցորենի  
ալիւրից շինուած պաքսիմատներն աւելի լաւ դուրս եկան,  
և Ռորինդօնն ասաց Ուրբաթին. «Ե՛կ, ցորեն ցանենք. սա  
մեզ բրինձից աւելի պէտք կըզայ»:—Յանեցին: Այն կզզին  
տարին երկու անգամ էր հաւնձ տալիս:

Այժմ Ռորինդօնն ասաց Ուրբաթին. «Ե՛կ շինենք մեզ  
համար մի դարբնոց. կոխենք բահեր, դամեր և դա-  
նակներ»:

Անձրեւների ժամանակը որ հասաւ, Ռորինդօնը դար-  
բնոցի վրայ տախտակներից մի տանիք շինեց, և նրանք  
սկսեցին աշխատել այնտեղ. շինեցին մի աբօր, մի տա-  
փան, և երբ անձրեւներն անցան, լամաներին աբօրում լծե-  
ցին, գետինը հերկեցին և ցանեցին ցորեն, գարի և սի-  
սեռ:

Այսպէս ապրեցին նրանք՝ մօտ կէս տարի: Մի առա-  
ւօտ Ռորինդօնը ծովափ ղրկեց Ուրբաթին, որ ոտորէներ  
հաւաքէ, իսկ ինքը տանը մնաց՝ վառարանը նորոգելու  
համար: Յանկարծ տեսաւ, որ Ուրբաթը վազէ-վազ չէտ էր  
գալիս: Երբ եկաւ հասաւ, շունչն արգելուած ոչինչ ասել  
չէր կարենում, միայն թէ կանչում էր. «Եկել են, եկել են:

«Ովքեր են եկել», հարցրեց Ռորինդօնը:

Իսկ Ուրբաթը կանչում էր. «Երկու, երեք, վեց նա-  
լակ»:

Ռոբինզոնը վազեց ելաւ լերան վրայ և տեսաւ, որ ա-  
փի մօտ վեց նաւակ է կանգնած և մէջը շատ վայրենի  
մարդիկ կային: Զուտ վայր իջաւ և ասաց. «Դէ, Ուրբաթ,  
վերցրո՛ւ հրացանդ, և շուտով այնտեղ գնանք»:

Նրանք առին վեց հատ հրացան, լքցրին և այնպէս  
ճանապարհ բռնեցին, որ վայրենիներն իրանց չբռնեին:  
Եւ Ռոբինզոնն ասաց. «Ուրբաթ, գնա՛ տես, ինչ են անում»:

Ուրբաթը թաքուն մօտեցաւ վայրենիներին, ամեն  
բան դիտեց, և յետ գալով ասաց Ռոբինզոնին. «Վայրե-  
նիները կրակ են վառել, շուրջը նստոտել են. կրակի վը-  
րայ էլ մի մարդ են խորովում. իսկ մի ուրիշ մօրուքա-  
ւոր սպիտակ մարդ, ձեռքը ոտքը կապկապած, գետնի վը-  
րայ ընկած է: Ռոբինզոն, շուտով գնանք»:

Ծովափի վրայ մի փոքրիկ պուրակ (անտառ) կար.  
այս պուրակի միջով նրանք մօտեցան վայրենիներին և  
վայրենիները նրանց չընկատեցին: Ռոբինզոնն այնպէս  
ուղղեց և արձակեց հրացանը, որ գնտակը վայրենիների  
գլխի վրայով թռաւ: Սկզբում վայրենիները ցիր ու ցան  
եղան ահից. բայց յետոյ, տեսնելով որ ոչ ոք չըկայ, կար-  
ծեցին թէ լսածներն ամսի դուռը էր, նորից հաւաքուե-  
ցան և սկսեցին կանչվաւտել և կրակի շուրջը պար գալ:

Եւ Ռոբինզոնն ասաց Ուրբաթին. «Ջանկ»: Երկուքն  
էլ միասին հրացան արձակեցին. վայրենիներից երեք մարդ  
սպանուեցան, հինգը՝ վիրաստրուեցան: Իլի մի անգամ որ  
պարպեցին, նորից երեք մարդ սպանուեցան: Յետոյ վայ-  
րենիների վրայ յարձակուեցան. Ուրբաթը սկսեց կռուել.  
Իսկ Ռոբինզոնը վազեց այն մարդու մօտ, որ կապուած  
ընկած էր գետնի վրայ, քակեց նրա չուանները և հար-  
ցրեց նախ զերմաներէն, յետոյ անգլիերէն. «Ո՛վ ես»:  
Մարդն ասաց «Սպանիացի եմ»: Ռոբինզոնը զինի տուաւ  
նրան որ խմէ, յետոյ տուաւ մի ատրճանակ և մի սուր:  
Սպանիացին սկսաւ կռուել վայրենիների հետ և շատե-  
րին ջարդեց: Այն միջոցին նրա վրայ ընկան երկու ուժեղ  
վայրենիներ և քիչ էր մնում որ սպանէին: Ռոբինզոնը  
զարկեց մէկին հրացանով, միւսի գլուխն էլ սրով կտրեց:



Վայրենիները, տեսնելով որ իրանցից շատերը սպանուել են, նաւակները նստան և փախան: Ուրբաթը և սպանիացին ուզում էին նրանց ետեւից ընկնել, բայց Ռորինգօնն ասաց. «Հէրիք է, ուրբան կոտորուեցան»: Ուրբաթը ասաց. «Պէտք է միւսներին էլ կոտորել, թէ չէ՝ տուն կերթան, շատ վայրենիներ կըբերեն և մեզ կըմեռցնեն կուտեն»: Իսկ Ռորինգօնն ասաց. «Ի՞նչ ես փախնում—մենք հրացաններ և թնդանօթներ ունինք, նրանք չունին: Թող դան»:—Յետոյ գնացին տեսնելու, թէ քանի մարդ էր սպանուել. բոլորի թիւն էր 21:

Ռորինգօնը գնաց վայրենիների թողած նաւակը տեսնելու և գտաւ նրա մէջ մի կապուած ծերունի: Կապերը բաց անելուց յետոյ, կանչեց Ուրբաթին, որ իւր լեզուով ծերունու հետ խօսէ: Հէնց որ Ռորբաթը վայրենուն տեսաւ, սկսաւ համբուրել նրան և թռչկոտել նաւակի մէջ: Ռորինգօնը հարցրեց, թէ ինչու է այդպէս ուրախսանում:

Ուրբաթն ասաց. «Սա իմ հայրն է»: Ռորինգօնը զինի տուաւ նրան. իսկ Ուրբաթը սկսեց շփել հօր մարմնի անդամները, որոնք ուռել էին կապերից:

Ռորինգօնը հարցրեց. «Հաց տուիր հօրդ»: Ուրբաթն ասաց «Ի՞նչ լիմար եմ, բալորն ինքս կերայ», և գուրս թրուաւ նաւակից, վագեց, շուտով յետ եկաւ, հաց ու պանիր բերելով, և տուաւ հօրն ու սպանիացուն, որ ուտեն: Յետոյ Ուրբաթն իւր հօրը և սպանիացուն նաւակի մէջ տեղաւորեց. իսկ Ռորինգօնը դրաւ միւս նաւակի մէջ հրացանները և վայրենիներից մնացած տէգերը, և ամենքը միասին եղերքին մօտիկ ճանապարհ բռնելով, նաւեցին դէպի քարալիւր:

Եւր վայրենուն և սպանիացուն քարալիւր տանելուց յետոյ, կերակուր տուին նրանց, որ ուտեն. նրանք լաւ կերպն կշտացան և քուն եղան: Միւս օրը Ռորինգօնն ասաց սպանիացուն. «Ի՞նչպէս ընկար վայրենիների ձեռքը»: Սպանիացին ասաց. «Մենք մի նաւակ ունէինք և Ափա էինք նաւում, հետներս հարիւր հատ զերի տանելով վաճառելու համար. քոսնը ճանապարհին մեռան, միայն ութուներ մնացին: Յանկարձ փոթորիկ բարձրացաւ և զիշերը մի ծանծաղի մէջ ընկանք. սկսանք թնդանօթներ

արձակել, բայց ոչ ոք օգնութեան չըհասաւ մեզ: Դերինները մեր հրացանները յափշտակեցին, բոլոր մեր նաւակները խլեցին և ուզում էին նաւի վրայ թողնել մեզ և փախչել. սկսեցինք աղաչել նրանց, որ մեզ էլ նաւակների մէջ առնեն: Առաւօտեան մի կղզու վրայ իջանք. այնտեղ վայրենի մարդիկ էին բնակում. մեզ տեսնելով նրանք ուրախացան և ձկնով կերակրեցին: Այն տարուտոյ չափ ապրեցանք նրանց մօտ: Մի օր ուրիշ վայրենիներ եկան այնտեղ, սկսեցին մեզ հետ պատերազմել, մեզնից շատերին սպանեցին, իսկ ինձ, Ուրբաթի հօրը և մի ուրիշ վայրենի մարդու գերի վարեցին և այն մարդուն կիրան»:

Ռոբինզօնն ասաց. «Գնանք, մի քանի բաներ ցոյց տամ քեզ»: Եւ ցոյց տուեց նաւից հստամ բաները: Սպանիացին ասաց. «Այս բաները մեր նաւի վրայ էին դրանվում. բոլոր սակին պատկանում էր մի վաճառականի, իսկ թանգագին քարերը—մի մեծաւորի, որ գտաւ ճանապարհին և մեռնելիս ապօրեց, որ քարերը Անդիլայ տարուին և իւր կնոջը տրուին»: Ռոբինզօնն ասաց. «Այս բոլոր իրեղէններն աչքերիս տէս պահպանել եմ. եթէ Անդիլայ դնացող մի մարդ պատահի, նրան կրտամ, որ տանէ մեծաւորի կնոջը հասցնէ»:

## 11.

Միւս օրը նրանք սպանուած վայրենիներին տրեցին: Ուրբաթն իւր հօրն ասաց, որ մարդ ուտելն ամօթ և մեղք է: Ծեր վայրենին սկզբում չէր հստկանում, թէ ինչու մեղք է: Ուրբաթը պատմեց նրան, թէ մի ճշմարիտ Աստուած կայ, թէ կուռքեր պաշտել հարկաւոր չէ. հայրը հաւատաց: Ռոբինզօնն Ուրբաթի հօր անունը Հին գ-շ աբթի դրաւ:

Ռոբինզօնը բոլոր զիակաները այրելուց յետոյ ասաց. «Սպանիացի, վերկաց այնտեղ գնա, ուր որ մնացել են ազգակիցներդ և բեր նրանց մեզ մօտ. նրանք մեզ մօտ աւելի լաւ կապրեն»: Սպանիացին ասաց. «Լաւ, բայց մենակ ինչպէս գնամ»: Ռոբինզօնն ասաց. «Հինգշաբթին էլ հետդ կերթայ»: Սպանիացին ասաց. «Թող այդպէս լինի,



—վաղը կերթանք»: Ռոբինզոնն ասաց. «Չէ, վաղը մի երթաք. առաջուց պէտք է գետինը հերկել և ցանք անել, որ երբ ազգակիցներդ կան, ուտելու բան ունենան»:

Սխեցին գետինը հերկել և ցորեն ցանել. այս աշխատանքը երկու շաբաթից աւարտեցին և յետոյ սխեցին ճանապարհի պատրաստութիւն տեսնել: Ռոբինզոնը մի թուղթ գրեց—այսպէս գրեց. «Ո՛վ որ կամենում է իմ կրդ-զու վրայ բնակիլ, պարտական է հնազանդիլ ինձ և բոլոր հրամաններս կատարել. իսկ ով որ չի հնազանդիլ և չի աշխատիլ, ես նրան կախ կրտամ»: Սպանիացին վերցրեց այս թուղթը, Հինգշաբթու հետ նաւակ նստեց, և գնացին:

Հաստ տխրեցաւ Ուրբաթը, հօրից բաժանուելով. և Ռոբինզոնը նրան ասաց. «Ուրբաթ, ինչո՞ւ ես տխրում. եկ որսի երթանք»: Որսի ելան և մի քարայր տեսան: Ռոբինզոնն ասաց. «Ուրբաթ, մտի՛ր տես, այդ ի՞նչ քարայր է»: Ուրբաթը մտաւ. բայց հէնց որ գլուխը մէջն էր դրել, դուռաց և շնչասպառ յետ վախաւ: Ռոբինզոնը յետ կանչեց նրան և ասաց. «Ի՞նչ բանից վախեցար»: Եւ Ուրբաթն ասաց. «Ա՛խ, Ռոբինզոն, այնտեղ մի սատանայ է է նստած՝ մեծ-մեծ աչքերով և բերանով,—այնպէս մեծ բերանով, որ քեզ էլ, ինձ էլ մէկ անգամից կուլ կրտայ»: Ռոբինզոնն ասաց. «Գնա տուն և լապտերը բեր»:

Լապտերը բերելուց յետոյ Ուրբաթը խնդրեց Ռոբինզոնին, որ քարայրի մէջ չըմտնէ. բայց Ռոբինզոնն ասաց. «Պիտի մտնեմ. ի՞նչ ես վախենում»:

Մտաւ քարայրի մէջ և տեսաւ ծեր այծին. սա արդէն մեռնելու վրայ էր և չէր կարենում վեր կենալ: Ռոբինզոնն աչքէ անցրեց քարայրը, իսկ Ուրբաթը մօտեցաւ այծին. էլ չէր վախենում նրանից: Ռոբինզոնը, ամեն բան ճանաչելուց յետոյ՝ ասաց. «Գուրս քշենք այծին»: Գուրս քշեցին, և նա մեռաւ:

Սպանիացին և Հինգշաբթին արդէն եօթն օր էր որ գնացել էին. ութերորդ օրն Ուրբաթը վազելով Ռոբինզոնի մօտ եկաւ և ասաց. «Ե՛կ լերան վրայ բարձրանանք, հայրս դալիս է»:

Ռոբինզոնը սարի վրայ ելաւ և տեսաւ, որ մի մեծ

նաւակ էր զալիս՝ մէջը շատ մարդիկ նստած, և ասաց. «Եկողները մերոնք չեն. դրանք անգլիացիք են—գուցէ ծովի հէներ (աւազակներ) լինին. գնանք միւս ժայռի վրայից նայենք»:

Եւան միւս ժայռի վրայ և մի մեծ նաւակ անսան փի մօտերքում: Ուրբաթն ասաց. «Գնանք թաքչենք պուրակի մէջ, տեսնենք ինչ պիտի անեն»:

Ռոբինզօնն ասաց. «Գնանք»: Ժայռի վրայից իջան և թաք կացան ծառերի ետև. նրանք ամեն բան տեսնում էին, իսկ իրանց ոչ ոք չէր տեսնում: Նաւակն ափին մօտեցաւ, միջից 11 մարդ դուրս ելան և երեք հոգի էլ կապուած դուրս հանեցին: Եւ մի բարձր հասակով մարդ ասաց կապուածներին. «Մենք ձեզ պիտի սպանենք»: Իսկ կապուածներն սկսեցին աղաչել, թէ «Մի սպանիր, լաւ է՝ այս կղզու վրայ թող մեզ. այստեղ ոչ ոք չի բնակում—բոլորը մին է՝ սովից կրմեռնենք»: Բարձր հասակով մարդն ասաց. «Դէ լաւ, կրտենենք»:

Ռոբինզօնն այս որ լսեց, ասաց Ուրբաթին. «ձուտ գնա, մի քանի հատ հրացան և ատրճանակ, վառօդ և գնդակներ բեր»: Ուրբաթը բերաւ և նրանք հրացանները լքցրին:

Երեք կապուածները նստած էին, իսկ միւսները կղզու վրայ մանդալու գնացին. մի քանիսն էլ պառկեցան քնելու: Երբ որ քնեցան, Ռոբինզօնը թաքսւն մօտեցաւ կապուածներին. նրանք վախեցան, իսկ Ռոբինզօնն ասաց. «Մի վախենաք. ասացէք—ո՞վքեր էք»: Եւ մինն ասաց. «Ես նաւապետ եմ. սրանք ընկերներս են. նաւաստները չըկամեցան ինձ հնազանդել և մեզ սպանել էին ուղում»: Ռոբինզօնն ասաց. «Ես կազատեմ ձեզ մահից, միայն թէ երդում արէք, որ ինձ Անգլիա կրտանէք»: Ամենքը երդում արին, և Ռոբինզօնն ասաց. «Նաւաստիները քնած են—կապենք նրանց»: Կամացուկ մօտեցան նաւաստիներին և կապկպեցին նրանց. երկուքը վերկացան և սուրերը հանեցին: Նաւապետն ասաց նրանց. «Միթէ չէք տեսնում, որ ձեր ընկերները կապուած են»: Տեսան թէ չէ, ծունկ չօքեցին և սկսան ներդուլիւն խնդրել. նրանց ձեռքերն էլ կապեցին: Եւ Ռոբինզօնն ասաց Ուրբաթին.



«Տանենք սրանց այն քարայրը, ուր որ այժը սատկել էր: Այնտեղ տարին ամենքին և մուտքը մի մեծ քարով փակեցին: Իսկ նաւակը ցամաք հանելով, յատակը ծակեցին, որ եթէ նաւից մարդիկ գալու լինէին, չըկարանային յետ տանել նրան:

Այն միջոցին թնդանօթի ձայն որոտաց նաւի վրայից, նշան տալով, որ կղզու վրայ դտանաւող նաւաստները նաւ վերադառնան: Յետոյ մի ուրիշ նաւակ եկաւ նաւի կողմից, միջից մարդիկ դուրս ելան և սկսան առաջուց եկողներին անունը կանչել: Կանչեցին, կանչեցին, բայց վերադարձող չըկար, արդէն կամենում էին դէպի նաւը յետ գնալ: Եւ Ռոբինզօնն ասաց Ուրբաթին. «Անտառ դնա և ձայն հանիր. նրանք կը կարծեն, թէ կանչողը նրանց ընկերներից մէկն է, և ձայնիդ ետևից կերթան»: Ուրբաթը սկսաւ կանչել և նրանք ամենքը նրա կողմը վազեցին, իսկ նաւակի մօտ միայն երկու մարդ մնաց:

Ռոբինզօնը և նաւապետը երկու ընկերներով թաքուն մօտեցան նաւակին, բռնեցին կապեցին պաշապաններին, իսկ նաւակը մացառի մէջ թաքցրին: Նաւաստները յետ որ եկան, տեսան որ նաւակը չըկար շատ վախեցան: Այն ժամանակ Ռոբինզօնն ասաց նաւապետի օգնականին, որ նրանց մօտ գնայ: Օգնականը գնաց և ասաց. «Այ կղզու թաղաւորն ամենքիդ գերի է բռնել. գնացէք նրա մօտ. եթէ չերթաք, նա 100 հատ զինուոր կըղրկէ և բոլորիդ սպանել կըտայ»: Նաւաստներից մինն ասաց. «Հապա եթէ գերի գնանք և նա մեզ էլի սպանել տայ»: Նաւապետը կանչեց նրան մացառի միջից. «Թ ո վ - մ ա ս - Ս մ ի թ. ձայնո ճանաչում ես: Ձեզ եմ ասում— գերի գնացէք, ոչ ոքին չեն սպանիլ, միայն Աթքիսիս կըսպանեն»: Իսկ Աթքինսը հէնց այն բարձրահասակ մարդն էր, որ կամեցել էր սպանել նաւապետին:

Նաւաստները բոլորը միասին ասացին. «Լաւ է՝ ամենքս գերի կերթանք»,— և երբ եկան, բոլորի ձեռքերը ետևից կապեցին:

Նաւապետը ասաց նրանց. «Վաղը դուք ինձ հետ նաւի վրայ կերթաք և կըխլէք նրան՝ ապստամբ նաւաստները ձեռքից: Եթէ ինձ չօգնէք, կղզու վրայ մնացող ըն-

կերներդ կրսպանուին»։ Նրանք ասացին. «Լաւ է՝ մենք քեզ կօղնենք. միայն թէ ամենքիս ներիր»։

Եւ Ռոբինզօնն տուաց նաւապետին. «Յնա՛ նաւի վրայ, և հէնց որ տիրես նրան, թնդանօթ արձակիր»։ Նաւապետն ասաց. «Լաւ»։ Եւ զնաց հետը մի քանի նաւաստներ տուներով, իսկ միւսները մնացին։ Երկար ժամանակ մի ձայն չէր լսվում, դիշերը մութն էր, և Ռոբինզօնը կարծեց, թէ սպանել են նաւապետին։ Յանկարծ թնդանօթը որոտաց։ Ռոբինզօնը շատ ուրախացաւ, որ նաւապետը նաւին տիրել էր և թէ ինքն էլ այժմ այդ նաւով Եւրոպա պիտի վերադառնար, իւր հօրն ու մօր տունը տեսներ։ Նա մինչև առաւօտ սարի վրայ կանգնած մնաց և միշտ ծովի վրայ էր նայում, որ նաւի դայը տեսնել կարողանար։ Երբ լուսացաւ, Ռոբինզօնն ասաց Ուրբաթին. «Նաւը չէ գալիս. նաւապետը երևի թէ խաբեց մեզ և մէնակ ինքը հեռացաւ։ Այժմ քարայրի մէջ նստած նաւաստները կրսպանեն մեզ»։ Ուրբաթն ասաց. «Ճշմարիտ է»։ Քանի որ նրանք այսպէս խօսում էին, լուսկարծ լսեցին, որ մի բան էր շարժվում. լետ որ նայեցան, տեսան որ նաւապետը նաւաստների հետ գալիս էր։ Ռոբինզօնը շատ ուրախացաւ և ասաց. «Նաւապետ, ես կարծում էի թէ դու մեզ խաբել ես։ Հապա նաւդ ո՛ւր է»։ Նաւապետն ասաց. «Կղզու միւս կողմը տարի, որ աւելի հանդիստ կանգնի—այնտեղ քամին սաստիկ չէ»։ Յետոյ Ռոբինզօնը նաւապետին և նաւաստներին իւր մօտ ճաշի հրաւիրեց։ Ճաշի ժամանակ Ռոբինզօնը պատմեց նաւապետին, թէ ինչպէս էր կղզու վրայ ընկել և այնտեղ քսան տարի ապրել։ Նաւապետը շատ դարմացաւ և ասաց. «Ռոբինզօն, ե՞րբ տուն կերթաս»։ Ռոբինզօնն ասաց. «Ապասիր թող Հինգշաբթին և սպանիացին էլ դան—այն ժամանակ կերթամ»։ Նաւապետն ասաց. «Հապա Աթքինսին և միւս նաւաստներին ինչ անենք»։ Եւ Ռոբինզօնն ասաց. «Ներիր նրանց և թող այս կղզու վրայ բնակեն»։

Նաւապետն ասաց. «Լաւ»։

Ուրբաթը գնաց չաշանեց նաւաստներին, որ նրանց սպանելու չեն, և նրանք շատ ուրախացան։ Եւ Ռոբինզօնն ասաց. «Ես ձեզ կրթողնեմ անասուններս և հրացան—



ներս և ամեն բան, ինչ որ ունիմ. միայն թէ լաւ մարդիկ եղէք»: Նաւաստներն ասացին: «Լաւ մարդիկ կըլինինք»:

Այդ միջոցին վազելով եկաւ Ուրբաթը և ասաց, որ Հինգշաբթին և սպանիացին եկել են: Ռոբինզօնը գնաց նրանց տեսնելու և տեսաւ, որ Հինգշաբթու Հետ եկել էին երկու սպանիացի և երկու վալքենի կին: Եւ Ռոբինզօնն ասաց. «Ինչո՞ւ են եկել այս կանայքը»: Սպանիացին ասաց. «Իմ աղգակիցներս պսակուել են, վալքենի կին են առել. այս նրանց կանայքն են: Սրանք կամենում են այս կղզու վրայ մնալ»: Ռոբինզօնն ասաց. «Թող մնան»:

Յետոյ սկսաւ ճանապարհի պատրաստութիւն տեսնել. վերցրեց իւր կաբան և վարտիկը, որ կարել էր լամայի մորթից—առաւ իւր աղեղն, տէգերը և քարէ տապալը, որ մենակութեան ժամանակ էր շինել,—վերցրեց և թանգազին քարերն ու ոսկին, որ նաւի վրայ էր գրտել, և տեղաւորեց այս բոլորը նաւի մէջ:

Երբ ամեն բան նաւի մէջ տեղաւորեցին, Ռոբինզօնն աղօթք արաւ Ամուծոյ և նաւ նստեց իւր երկու լամաների, թուլթակի և շան Հետ միասին: Ուրբաթն ու Հինգշաբթին նրա Հետ նստեցին: Կղզու վրայ մնացին վեց անգլիացիք և երկու սպանիացիք իրանց կիներով:

Ռոբինզօնը յաջողակ նաւարկելով, մի ամսից Սպանիա Հասաւ. և զնաց Կադիքս քաղաքը: Այնտեղ նա գտաւ այն վաճառականին, որ ոսկու տէրն էր. վերադարձրեց նրան նաւի մէջ գտած ոսկին և ասաց. «Ամբողջ մի տարի պահեցի ոսկիդ»: Իսկ վաճառականն ասաց. «Գու ազատեցիր ինձ մեծ նեղութիւնից. ինձ ուզում էին բանտ դնել պարտքերիս համար. քեզ թող լինի ոսկու կէսը»: Ռոբինզօնն ասաց. «Ոսկիդ ինձ հարկաւոր չէ. ես իմս ունիմ»:

Կադիքսից դէպի Անգլիա նաւեցին, Պորտսմութ քաղաքն եկան: Հինգշաբթին մեռաւ ճանապարհին, Ուրբաթը շատ լաց եղաւ: Լամաներն էլ սատկեցան:

Ռոբինզօնը Պորտսմութ որ եկաւ, գնաց գտաւ սպանիական նաւի վրայ մեռած մեծաւորի ալքի կնոջը և յետ տուաւ նրան թանգազին քարերը: Այրի կինը շատ աղ-

քատ էր և մուրալով էր ապրում: Զատ շնորհակալ եղաւ Ռոբինզոնից, որ սա աղատեց նրան աղքատութիւնից:

Պորթսմութի մէջ Ռոբինզոնը մի նաւ վարձեց, որ Համբուրգ երթայ: Նաւը լաւ էր գնում և արդէն Համբուրգին հասնելու վրայ էր, որ լանկարձ մի սաստիկ փութորիկ բարձրացաւ և նաւը խորտակեց: Մարդիկ մակուղներով փրկուեցան, իսկ նաւի մէջ եղած բոլոր ապրանքները ջրի տակ գնացին. Ռոբինզոնի ոսկին էլ ջուրն ընկաւ. միայն շուներ ողջ մնաց—նա լող էր տալիս մակուղիի ետեւից:

Ռոբինզոնը Ուրբաթի Հետ Համբուրգ որ մտաւ, իսկույն Հօր մօտ գնաց: Հայրը սկզբում չըկարողացաւ ճանաչել նրան. արդէն ծերացել էր, վատ էր տեսնում: Բայց երբ իմացաւ, որ եկողը որդին էր, լաց եղաւ, Ռոբինզոնն էլ լաց եղաւ: Եւ Ռոբինզոնն ասաց. «Հայրիկ, հապա մայրս ո՞ւր է»: Հայրն ասաց. «Մեռել է. նա միշտ ուզում էր քեզ տեսնել»: Ռոբինզոնն ասաց. «Յիմար էի, որ ճանապարհորդելու գնացի. փնռք Աստուծոյ, որ այժմ տանն եմ»: Յետոյ պատմեց Հօրը, թէ ինչպէս էր ընկել կղզու վրայ և քսան տարի այնտեղ ապրել: Հայրը շատ զարմացաւ և սիրով ականջ էր դնում որդու ասածներին:

Ռոբինզոնը հիւսն դարձաւ և սկսաւ աշխատել Ուրբաթի Հետ մի նաւահանգստի մէջ: Նրանք միշտ շատ զործ ունէին, որովհետեւ լաւ էին աշխատում: Երկար ապրեցան և շատ փող վաստակեցին: Ռոբինզոնի Հայրը մեռաւ. նրանից յետոյ Ուրբաթն էլ մեռաւ: Եւ Ռոբինզոնը այնպէս նորից մենակ մնաց, ինչպէս որ էր կղզու վրայ բնակելիս:

Փ. ՎԱՐԴԱՆՅԱՆ





# Ե Ր Պ



(Բառի Կոռնուկից)

սղ անուշ երգը հնչէ հեշտագին,  
Ինչպէս խոխոջը վրձիտ առուակի,  
Թող յիշեցնէ մարդկային սոգգին  
Սիրելի պատկերն անցած օրերի:

Վեհ ձայնը երգչի թող դնէ վախճան  
Մեր դառն սուգին, ստոր կըքերին.  
Թող նորա երգը ազգասիրական  
Ներշնչէ աշխույժ հռանդ մեր սրտին:

Ինչ մեզ յուզում է՝ թող այն ամենայն,—  
Եւ ծիծաղ, և լաց, հանգիստ և թախիծ,  
Եւ ուրախութիւն և վիշտը մարդկան,—  
Թող մասն ունենան այն հզօր երգից:

Թող զարթեցնէ նա միտքը քնէած,  
Թուլերին ոյժ տայ, քաջերին ոգի,  
Եւ պարգևատրէ որդոցն հայրենեաց  
Փառքովը իրանց արդար զործերի:

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ






## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ


(Դիսանդէլից)

ԱԶՔ ԵՒ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՊԱՏԱՐԱՆՔՆԵՐ

Բ.



ի և նոյնը նկատելի է և անկիւնների վերաբերութեամբ. օրինակ № 1 նկարի վրա 1, 2, 3, 4 անկիւնները ուղղանկիւններ են և այդպէս էլ պիտի մեզ երևային. մինչդեռ 1 և 2 անկիւնները պատ-




(№ 1)

կեանքից. օրինակ, մի դատարկ սենեակը աւելի փոքր է թւում քան նոյն սենեակը կաՀաւորուած. պատը, որ

կերանում են մեր աչքին որպէս սուրանկիւններ, իսկ 3, 4 անկիւնները թւում են որպէս բութանկիւններ. առ Հասարակ անկիւնները իրանց իսկական չափից մեծ են թւում, եթէ մասերի են բաժանուած: Նայնանման շատ աչքախաբուծիւններ յայտնի են առօրեայ




ծածկած է նախշուն թղթով (շապով) աւելի մեծ է թրւում քան մերկ պատը: Մի օրիորդ, որ հագած ունի երկար վերից վար ընկած շերտերաւոր կտորից զգեստ՝ աւելի բարձրահասակ է թւում: Հատ անդամ ընտանեկան ակումբների ժամանակ զուարճութեան համար առաջարկում են մէկին կամ միւսին որ գտակի բարձրութիւնը նշան անէ պատի վրայ յատակից, փորձուած է, որ սովորաբար, մէկ ու կէս անգամ աւելի է նշանակվում:



(№ 2)

№ 2 Նկարի վրայ «գրծի» շարունակութիւնը թրւում է իբր թէ գ-ն է, բայց իսկապէս նրա շարունակութիւնը բ-է. այդ պատրանքը աւելի է լինում, եթէ նկարը վերցնենք փոքր դիւբով: Նայեցէք № 3 պատկերի վրա,


ուր բ-ի վրայ երկու փոքրիկ նուրբ դիճերը, որոնք իսկապէս իրար շարունակութիւն են, սակայն մեր աչքին այդպէս չեն երեւում, իսկ երկրորդ գ զծում ուր նուրբ դիճերը իրար շարունակութիւն չեն, թրւում են թէ՛ են:



(№ 3)

Խնդրում եմ, իմ սիրելի ընթերցողներ, յատուկ ուշադրութիւն դարձնէք այս նկարների վրայ, որոնց աւելի ուշի ուշով դիտելով դուք բացի զուարճութիւնից, կը գիտենաք զճաղրութեան ամենահետաքրքրական օրէնքները, որոնց իմանալը նկարչութեան ժամանակ շատ կարևոր է առարկայի ճիշտ պատկերացումի համար: Հիմա ես ձեզ կը ներկայացնեմ դարձեալ մի քանի օրինակներ, որոնք ակն յայտնի կերպով կապացուցանեն այդ և ձեզ կը պատճառեն հիացում:

№ 4 Պատկերի վրայ ցույց է տրուած կրկին մի նը-  
շանաւոր պատրանք. « և ք երկու ձևեր են, որոնք բաղ-  
կացած են երկ-երկու ճիշտ զուգահեռական աւ-բ բ և գ գ-  
դ գ զծերից, այլ սակայն Ա զուգահեռականի զծերի ծայ-



(№ 4)

րերը թւում են մեր աչքին կորացած դէպի ներս, իսկ Բ  
զուգահեռականի զծերի ծայրերը թվում են կորացող—  
ծովող դէպի դուրս: Այդ պատրանքը պատճառում է այն  
թեք զծերի հակառակ ուղղութիւնը, որոնք զծուած են  
այդ զուգահեռական զծերի վրայ: Դիտեցէք ուշադրու-  
թիւնով:

Ն. ՏԵՐ-ԱՆՏԻՔԵԱՆ





## ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Օրացոյցներ.** — Օրացոյցներ մանաւանդ հայերի մէջ ամենաշատ տարածւող հրատարակութիւններից մինն է. բարեպաշտ եւ եկեղեցւէք հայր բաւական է, որ, ինչպէս ասում են, մի գիր կապել իմանայ, նա իսկոյն ձեռք կըբերի այդ հրատարակութիւնը եւ ամենայն ինամքով ամբողջ տարին ծոցումը կըպահէ նրան: Օրացոյցի այդ օրինակ պահանջ լինելը՝ իր վրայ դարձրեց ազգայինների ուշադրութիւնը եւ Կ. Պոլսում օրացոյց հրատարակելու մենավաճառութիւնը յատկացրին տեղական ազգային Ս. Փրկչի հիւանդանոցին: Ս. Փրկչի հիւանդանոցի հոգաբարձութիւնը շնորհիւ Տ. Մաղաքիա նպակոպոսի մեծ զարկ տուաւ այդ գործին, աւելայնելով օրացոյցի վերջումը ամենաթանկագին տեղեկութիւններ. այդ առաւելութիւնը օրինակ եղաւ Ս. Էջմիածնում եւ Տիփսիսում, ուր անցեալ եւ այս 1888 թւի հրատարակած օրացոյցները ըստ ամենայնի գոհացուցիչ են եւ աժանագին:


**Համաշխարհային ցուցահանդէս.** — Բրիւսելում եկող 1888 թւի մայիսին կըբացուի համաշխարհային հանդէս, որի գլխաւոր բաժանմունքը պիտի նուիրուած լինի գրականութեան, գեղարուեստներին եւ պիտութեան ծաղկմանը նպաստող առարկաներին: Օրինակ այդ տեղ հանդէս պիտի դրուի—ուպարան, վիմագրութիւն, ծուլարան, ամաղորեր, լրագրեր, գրքեր, գրավաճառութիւն, թղթագործութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, աշ-


խարհագրութիւն, լուսանկարչութիւն, բժշկականութիւն, երաժշտութիւն, վիրաբուժութիւն, առողջապահութիւն եւ այլն, եւ այլն, եւ այլն: Ընդամենն աշխարհահանդէսը պիտի ունենայ յիսուն բաժանմունք: Նշանակուած մրցանակների արժէքն է կէս միլիօն ֆրանկ: Մի նորութիւն, որ պիտի լինի այս ցուցահանդէսում այդ այն է, որ պիտի լինի մօնստրալեդրա, որի տարուելու իրեղէնները պիտի լինին նոյն իսկ հանդէս տրուած առարկաները:

**Կեանքի գնահատումը Պարսկաստանում.** — Պարսկաստանում արդարադատութեան համար դրոժադրվում է կրօնական Շափաթ կոչւած օրէնագրութիւնը, որի խրաւարանական հիմունքները անմարդավայել եւ բարբարոսական են: Օրինակի համար Շափաթը ասկանում էան պէս առաջնակարգ եղեռնագործութիւնը կարգադրում է այսպէս. եթէ սպանուածը մահմեդական է, նրա արեան գինը 3000 ռուբլի է, իսկ եթէ քրիստոնեայ է՝ 100 ռուբլի. այդ տուգանքը վճարելով մի յանցաւոր պատժուած եւ արդարացրած է համարվում եւ յանցաւորը՝ նայած իր հարստութեան՝ կարող է բաւական մարդ ջարդել: Այդպէս մի մահմեդական ջարդելով 30 հայ, կարող է 3000 ռուբլի վճարելով պրծնել: Այդ բարբարոսական օրէնքները գործադրվում են եւ հիմա:



### ՀՈՌՈՎՄԻ ՊԱՊԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ:

 Ուովմի պապը, որ է կաթողիկական եկեղեցու կաթողիկոսը, շուտով պիտի կատարէ իր կրօնաւորական աստիճան ընդունելու յիսնամեայ յօրեկեանը: Այդ առթիւ աշխարհիս ամեն ծայրերից արդէն սկսել են տեղալ անհամար զարմանազան, ծանրագին, ճարտարագործ ընծաներ Լւոն XIII պապի վեհարանը, որ կոչվում է Վատիկան: Այդ ընծաները պիտի հանդէս դրուին ի տես հասարակութեան առաձին պալատի մէջ, որ ասպահովացրած է կրակից 60 միլիօն լիրայի: Նորերս մի հարուստ լեհացի կին այդ առթիւ ղրուկել է պապին 200,000 ռուբլի, ինչպէս տօնական ընծայ: Լրագիրները իրաւամբ հարցնում են՝ թէ արդեօք այդ ընծան էլ հանդէս կը դրուի թէ չէ:







### ՀԱՆՆԵԼ ՈՒԿՆԵՐ

Առաջ. վ. Սառաֆեան.

Երեք վանկով ութը տառ եմ,  
Մեծ տարածութիւն ըռպէում կանցնեմ,  
Թէ ծովեր, լճեր, բարձրաբերձ լեռներ  
Կանցնեմ կըթռչիմ քիչ ժամանակում:  
Սիրում եմ ապրել ազատ օդի մէջ,  
Կաւ սիրում եմ ծաղկաւէտ դաշտեր,  
Երբէք չեմ մտնում մարդաշատ տեղեր.  
Ես այնտեղ ունիմ շատ թշնամիներ:  
Սկզբի վանկովս ես ձեզ շատ կօգնեմ,  
Թէւ ատում են ինձ ամեն մարդիկ.  
Բայց և շատ անգամ յարգում են սիրում:  
Իսկ եթէ տաք ինձ չորրորդ տառը,  
Ես էլ կըտամ ձեզ միւրգերի լաւ տեսակ,  
Ազնիւ մրգերի ես տեսակիցն եմ,  
Ով որ կերել է զիտէ իմ համը:  
Առէք իմ երրորդ վանկի վերջին տառ.  
Որով կըստանաք դուք Հայաստանում,  
Դարերից մնացած մի քաղաք աւեր,

---

Սև սալա, սպիտակ սալա,  
Խաթունը մէջը կըսկսուի:

---

Դտէք երեք տառ, երկուսը բաղաձայն, մէկը ձայնաւոր, այնպէս որ աջից դէպի ձախ կարգալիս ստանաք մի գործիք, իսկ ձախից դէպի աջ—մի բան, որ հարեանից կը բերեն և էլի յետ կըտանեն:

Այն ինչ տեղ է, որ աշխարհի ստեղծման օրից առիւի լոյս չի դիպել:

### 3. Տէր Մարտիրոսեանց:

Ճ

ռ	ու	ք
ա	գ	դ
ն	ն	ո

	ա	
	ե	

ի		ն
գ		դ
ո		լ

ի		լ
ք		ս
ք		

օ	դ	ա
է	ո	ւ
ո	լ	ե

ի.

ա	հ	ա
ա	կ	օ
ս	ո	դ

Ս

ու	հ	ե
ն	ի	կ
կ	ե	ա

ձ	տ	ու
ն	կ	ր
կ	ա	ն

Ռ

Ս

շ	ե	ց
ը	ի	մ
ը	ա	տ

	օ	
	ը	
	տ	

Ս

կ	օ	դ
ռ	ա	ջ
դ	ի	ն

է	լ	չ
ւ	ր	ա
ձ	ա	ն

Ա.

Թ.

դ	ի	ն
ձ	ի	պ
ա	ց	մ

ս	ե	ց
ձ	ո	ր
ու	ե	ց

Ք

ե	գ	ը
ի	ն	ւ
օ	ն	մ

Ս

հ	ե	ռ
ի	ն	ր
հ	ա	լ

դ

Այս 16 հատ քառակուսիներից կաղմեցէք մի այնպիսի մեծ քառակուսի, որ կարգացուի Դամառ-Փաթիլ-պաղի բանաստեղծութիւններից մէկի վերջին տողերից երկուսը:





# ԼՈՒԾՈՒՄՆ Ա. Տ.-ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ ՀԱՆԵՒՈՒԿԻ

Լուծեց Տէր-Գրիգորեանց Ղալարցի.

Որոնա՞ծ բառերն է՝ վարդապետ: Առաջին վանկը՝ վար, վարել, հերկել երկիրը, վարել կառքը, Լալլն: Երկրորդ վանկն է, դա. ցուցական դերանուն երկրորդ դէմք. դա, այդ: Երրորդն է՝ պետ. կրնշանակի գլխաւոր: Եթէ երկրորդ վանկի ա տառը աւելացնենք երրորդի սկզբին, կրստանանք՝ ապետ կամ աւելի ճիշտ ասվում է աբեթ, որ նշանակում է վառելի սունկ (արցան): Իսկ եթէ երկրորդ վանկի դ տառը դնենք առաջինի վերջում, կրստանանք վարդ բառը:

Գտէք մի բառ, որ ձախից դէպի աջ կարդալու լինինք, ստանանք մի հանք, իսկ եթէ աջից դէպի ձախ կարդանք ստանանք մի տնային գործիք, ջուր խմելու համար:



## Ր Ե Ր Ո Ւ Ս



Նախընթաց №-ի մէջ եղած Հանելուկի և Թուաբանական Ֆոկլուսի բացատրութիւնը: Հանելուկի բացատրութիւնը՝ Վարդապետ, Թուաբանական Ֆոկլուսի բացատրութիւնը XX—22=88:

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՅ